Այս ուղեգնացութիւնը որ իր ժամանակի վերածննդեան աշխատութեան գլխաւոր բոլոր գործիչները, Մեծ–Անապատի հիմնադիրները Սարգիս եպ. և կիրակոս քհ., Գրիգոր վրդ. Դարանաղցի, Կարապետ վրդ. Քօթ և ուրիշ շատեր կատարած են, կեսարացի և Տաթեւացի, երկու վերանորոգութեան չարժման մեծ գործիչներն ալ ըրած են, պարզապէս ուսումնասիրելու համար եգիպտոսի, Սկիտէի անապատականներու կեանքը։ Անոնք կը կարծէին թէ այս ճգնողական կենցաղին մէջ մտաւոր լուսաւորութեան սերմերը պիտի կարենային ձեռք բերել, վանական կեանք և կազմակերպութիւն ստեղծելով, եգիպտոսի և Երուսաղէմի օտար վանքերու նմանողութեամբը։

Այս պատճառով է որ այդ ուսումնատենչ և վերանորոգիչ հայեղեցականները կը փութային եգիպտոս և Երուսաղէմ։

Գր. կեսարացի և իր անդրանիկ աշակերտը Մովսէս Տաթեւացի, ահա թէ ի՛նչ բանէ մղուած այս ուղեւորութեան ձեռնարկած ըլլալ կը թուին(*)։

(*) Մովսէս Տաթեւացի այս առթիւ երուսաղէմի մէջ կը սորվի մեղրամոմը մերմկցնելու արհեստը, վասնզի վանական–ճգնողական կեանքի մէջ պայման էր նաեւ աշխատութիւնը ապրուստ ապահովելու համար։